**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «10» 01. 2020թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝

-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

գնահատողներ՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կոմտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ.Ուստյան:

- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ.Մխիթարյան,

Բացակայում է՝ ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Մկրտչյան

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Տ.Աբրահամյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

**1. Մասնակցի՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում և 30,12,2019թ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մեջ առկա էին հետևյալ անհամապատասխանությունները՝

- Համաձայն մասնակցի կողմից 09,12,2019թ, ներկայացված Հավելված N 1-ի՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հավաստում է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, այնինչ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորելու համար Ձեր կողմից ներկայացված համանման /նմանատիպ/ պայմանագիրը 09,12,2019թ, դրությամբ դեռևս ավարտված չէր (որպես պայմանագրի ավարտ սահմանված է 29,12,2019թ,);

- Համաձայն մասնակցի կողմից 09,12,2019թ, ներկայացված Հավելված N 1-ի՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հավաստում է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին, մասնավորապես «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին, այնինչ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում Ձեր կողմից ներկայացրած գնային առաջարկից:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվեց երեք աշխատանքային օրով և առաջարկվեց մասնակցին գնումների օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով շտկելու անհամապատասխանությունը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

- «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի համապատասխանությունը հիմնավորելու համար ներկայացված համանման /նմանատիպ/ պայմանագրերի շրջանակներում մատակարարված ապրանքների հանրագումարային ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս է Ընթացակարգի շրջանակում Ձեր ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Ի գիտություն՝ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գրության համաձայն պետք է ներկայացվեր թվով 18 (տասնութ) պայմանագիր, այնինչ փաստացի ներկայացվել են միայն 14-ը (տասնչորս):

- Ընթացակարգի հրավերի 8.19 կետի համաձայն Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության գնահատման արդյունքում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում, արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացնելու, այնպես էլ Կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ, այնինչ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ստացել Կոմիտեից տրված որևէ նոր տեղեկատվություն:

Ի գիտություն՝ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից, հետևաբար՝ քանի որ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 09.12.2019թ., ուստի Ընթացակարգի շրջանակներում հաշվետու տարիներ են համարվում 2016-2018թթ.:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «Լիմոն Գրուպ» ՍՊԸ հայտը:

Քանի որ 30.12.2019թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց «Փեշ» ՍՊԸ և «Մաքս Օիլ» ՍՊԸ ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող;

1.2. Քանի որ «Լիմոն Գրուպ» ՍՊԸ հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվել է, ուստի 22.01.2020թ գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին իր համապատասխանությունը

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Տ.Աբրահամյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/3» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 1100-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում կողմ 3, դեմ 0:

| | |
|---|---|
| **Գնահատող** | Հ.Մելիքյան |
| **Գնահատող** | Կ. Մխիթարյան |
| **Գնահատող** | Գ. Ոստյան |
| **Գնումները համակարգող՝** | Տ.Աբրահամյան |